



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-2-Ե-3
2017թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Սկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բարսյանի, Գ. Բաղիրյանի,
Ռ. Բարսեղյանի, Ա. Դարբինյանի,
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,
Մ. Հարթենյանի, Գ. Դազինյանի,
Ս. Չիչոյանի, Ե. Սողոմոնյանի,
Վ. Ստեփանյանի, Հ. Փանոսյանի,
Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2017 թվականի փետրվարի 14-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորի թափուր պաշտոնը համալրելու համար վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակի քրեական մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց թեկնածությունները և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Անդրանիկ Մնացականի Մնացականյանի թեկնածությանը:
2. Անդրանիկ Մնացականի Մնացականյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար՝ դադարեցնելով նրա՝ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ